ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԱՊՆ-ԻՆ
(1 հոկտեմբեր 1986 թ.)

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ.—Ձեր մտքերը և հույսերը սովետական կառավարության նոր նախաձեռնությունների մասին:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն.—Իբրև քրիստոնյա հոգևորական և իբրև Հայ Եկեղեցու պատասխանատու ղեկավար, գրեթե Մեր ամենօրյա մտածումների առարկան է հանդիսանում ողջ մարդկությանը սպառնացող հավանական ատոմական մի պատերազմի ահարկու ուրվականը: Չի կարելի Քրիստոսի Ավետարանը ուսուցանել և միաժամանակ ծանրորեն չմտահոգվել ապագա նման մի պատերազմի աշխարհակործան աղետով:

Եվ հետևաբար նաև չի կարելի չողջունել ամեն նախաձեռնություն, ամեն միջոցառում, որի նպատակն է կանխել նման մի աշխարհակործան աղետ:

Ահա թե ինչու բնական է, որ մենք, իբրև Քրիստոսի Ավետարանը քարոզողներ, բոլոր հոգևորականներս, ամենաջերմ կերպով ենք ողջունում Սովետական Միության վերին ղեկավարության վերջին տարիների հետևողական նախաձեռնությունները՝ դադարեցնելու ատոմական զենքերի արտադրությունը և փորձարկումները, հասնելու ընդհուպ մինչև բոլոր պետությունների ամբողջական զինաթափմանը:

Այո, մխիթարություն է մեզ համար նման խաղաղասեր քաղաքականությունը սովետական կառավարության, որի գերագույն ղեկավարը՝ Միխայիլ Գորբաչովը, նոր հույսեր և նոր լավատեսություն ներշնչեց ողջ մարդկությանը իր այս տարվա օգոստոսի մեծահոգի առաջարկով, ատոմական փորձարկումները միակողմանի կերպով դադարեցնելու մինչև սույն տարվա վերջը:

Նման նախաձեռնություններն ու առաջարկությունները հանդիսանում են փրկության հույսը ողջ մարդկության: Այդ իսկ է կամքը Աստուծո, զի մեր Աստվածը խաղաղության Աստված է:

ՀԱՐՑՈՒՄ.—Հայ Եկեղեցու դերը ատոմային փորձարկումների կանխման համար:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Հայ Եկեղեցին ու իր հոգևոր բոլոր սպասավորները մեր օրերին ապրում են ու գործում վերոհիշյալ մտահոգություններով և հույսերով, որովհետև ատոմային մի պատերազմ պիտի կործանի ու բնաջնջի նաև մեր Մայր եկեղեցին ու մեր մայր երկիրը, ողբերգություններից փրկված ու վերածնված արդի Հայաստանը:

Ահա թե ինչու Հայ Եկեղեցին և հայ հոգևորականությունը, գլխավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, անձանձրույթ աղոթում են ու գործում վասն խաղաղ գոյակցության պետությունների և համերաշխ գործակցության ժողովուրդների:

Նաև անձամբ Մենք, իբրև առաջին սպասավորը Հայ Եկեղեցու, վերջին երեսուն տարիներին մասնակցել ենք սրտեռանդ կերպով բազմաթիվ միջազգային խաղաղության համագումարների, խորհրդակցությունների և հաճախ խաղաղության կոչեր ենք հղել մեծ պետությանց ղեկավարներին, ինչպես անցյալ հուլիսին Մեր կոչն էր՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց մեծարգո նախագահին, այն հույսով, որ նաև այս մեծ պետությունը կոդդեգրի ետսվածահաճո քաղաքականությունը «յերկիր խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան», այն գիտակցութեամբ, որ միայն խաղաղության պայմաններում հնարավոր պիտի լինի իրականացումը բոլոր արդար իղձերի, հնարավոր պիտի լինի լուծումը ազգամիջյան, ընկերային և տնտեսական հարցերի ու նաև կենսագործումը մարդու իրավունքների, որ մարդու գերագույն իրավունքն է՝ խաղաղ ու անվտանգ ապրելու իրավունքը:

ՀԱՐՑՈՒՄ.—Ինչ գործնական քայլեր առնել՝ կանխելու համար ատոմային պատերազմը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մեր կարծիքով ատոմային հնարավոր մի պատերազմ կանխելու առաջին պայմանն է, դադարեցումը բոլոր տեսակի ատոմային զենքերի փորձարկումների բոլոր պետությանց կողմից, որոնք այդ զենքերը ունեն:

Երկրորդ միջոցառումը կարելի է նկատել ընդհանրապես դադարեցումը բոլոր տեսակի զենքերի արտադրության բոլոր պետությունների կողմից, միջազգային հսկողություն սահմանելով բոլորի վրա:

Երրորդ, Մեր մտածումը կլիներ Միացյալ Ազգերի Կազմակերպության հովանու տակ մի նոր Ուխտի ստորագրումը, որով բոլոր պետությունները հանդիսավոր կերպով պարտավորվեն դադարեցնել ատոմական և մյուս տեսակի զենքերի արտադրությունը և խստիճանաբար ոչնչացնել կուտակված բոլոր զենքերը, մինչև ամբողջական զինաթափման իրականացումը:

Այս նոր Ուխտը պիտի լինի արձագանքը 1945-ին Սան Ֆրանցիսկոյում ստորագրված Միացյալ Ազգերի Կազմակերպության մեծ Ուխտի:

ՀԱՐՑՈՒՄ.—Աշխարհի քրիստոնյաների դերը կանխելու ատոմային պատերազմը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Սպասելի է և անհրաժեշտ, որ աշխարհի բոլոր կրոնական կազմակերպությունները, հատկապես Քրիստոսի անունով գործող եկեղեցիները, հավատարիմ Սուրբ Ավետարանի պատգամներին, իրենց սեպուհ պարտքը նկատեն աղոթել և մշտապես գործել խաղաղության մարդա-

սիրական գաղափարի հաղթանակի և ընդհանուր վինաթափման իրականացման համար, այն համոզմամբ, որ խաղաղության ճանապարհով հնարավոր պիտի լինի իրագործումը ազատության, ապատության և համամարդկային եղբայրության իդեալների:

Մարդկության առաջ դրված բոլոր տեսակի հարցերը պետք է լուծվեն ոչ թե ատոմական, այլ խաղաղության վենքերով:

Մեր եղբայրական կոչը պիտի լիներ ողջյալ աշխարհի բոլոր քրիստոնյաներին և հատկապես Եկեղեցիների ապահովորներին՝ համախումբ ու կազմակերպված գործել հօգուտ աշխարհի խաղաղության ամրապնդման, ինչ որ պիտի նշանակի գործել հանուն Քրիստոսի Ավետարանի պատգամների կենսագործման երկրի վրա: